ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

SAINT GREGORY
THE ILLUMINATOR
MEDICAL CENTER

**«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԲԸ-Ի**

**ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ**

**«Հաստատում եմ»**
**«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ**
**պետական բժշկական քոլեջի**
**տնօրինական խորհրդի նախագահ՝**
**Ռ. Մարգսյան**
**«03» 03.2025թ.**

# «ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԿ ՓԲԸ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**
**/ՆՈՐ ԽԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ/**

**ԵՐԵՎԱՆ 2025**

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսանողների բացակայությունների և ակադեմիական տարբերությունների լրացման կարգը (այսուհետև կարգ) բխում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի պետական բժշկական քոլեջում սովորող ուսանողների բարձր առաջադիմության ապահովման անհրաժեշտությունից և նպատակ ունի կանոնակարգելու ուսումնական դասընթացից բացակայություններ ունեցող ուսանողների ուսումնական ծրագրով նախատեսված դասաժամերը լրացնելու գործընթացը, կանխելու բացակայությունները:
2. Սույն կարգով կանոնակարգվում է վերականգնման, տեղափոխման, մեկից ավելի մասնագիտություն ձեռք բերելու կարգերով, քոլեջ մուտքագրված ուսանողների ակադեմիական տարբերությունների լրացման կարգը:
3. Կարգը տնօրենի ներկայացմամբ հաստատում է տնօրինական խորհուրդը /այսուհետ խորհուրդ/: Այն գործողության մեջ է մտնում քոլեջի տնօրենի հրամանի համաձայն:
4. Կարգը կազմելիս հիմք են ընդունվել ՀՀ «Կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները (այսուհետ՝ Օրենսդրություն), «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պետական բժշկական քոլեջի կանոնադրությունը (այսուհետ՝ Կանոնադրություն), ուսանողի ուսումնառության պայմանագիրը, քոլեջի զարգացման ծրագիրը (այսուհետ՝ զարգացման ծրագիր):
5. Սույն կարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են դրա հաստատման համար սահմանված նույն կարգով:
6. Սույն կարգը և դրանում կատարված փոփոխությունները տնօրենի սահմանած կարգով հրապարակվում են և տեղադրվում Քոլեջի պաշտոնական կայքում և հայտարարությունների համար նախատեսված տեղեկատվական վահանակին:
7. Սույն կարգը հանդիսանում է Քոլեջի ներքին իրավական ակտ:

## 2. ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՔԱՆԱԿԸ

8. Բացակայություն է համարվում ուսանողի կողմից հարգելի կամ անհարգելի պատճառով ցանկացած առարկայի, մոդուլի տեսական կամ գործնական պարապմունքի, ուսումնական, արտադրական և նախաավարտական

պրակտիկաների համար նախատեսված ժամին սահմանված դասաժամի տևողության 30 % և ավելին չմասնակցելը:

9. Ուսումնական պարապմունքներին ուսանողների հաճախումների վերաբերյալ տվյալները /բացակայությունները/ գրանցվում են դասամատյանում, էլեկտրոնային մատյանում՝ դասավանդող դասախոսի կողմից:
10. Տվյալ առարկայի, մոդուլի կիսամյակը չի ամփոփվում, եթե առկա է չլրացված բացակայություն: Ստուգարք և քննություն կարող են հանձնել այն ուսանողները, ովքեր չունեն տվյալ առարկայից, մոդուլից բացակայություններ, կամ էլ բացակայությունները սահմանված կարգով լրացվել են:
11. Հարգելի են համարվում՝
    11.1. հիվանդության պատճառով բացակայությունները, եթե ուսանողի կողմից ներկայացվում է հիվանդության վերաբերյալ բժշկական փաստաթուղթը (ԱՆ 2013թ. Հուլիսի 3-ի N35-Ն հրամանով հաստատված քաղվածքը),
    11.2. հաշմանդամ կամ հիվանդ ծնողին խնամելու (համապատասխան մարմնի կողմից տրված տեղեկանքի առկայության դեպքում), նրա ընտանիքի անդամի կամ մերձավորի մահվան պատճառով՝ մինչև 3 օր՝ բացակայությունները, քոլեջի տնօրինության կողմից տրված թույլտվությամբ.
    11.3. քոլեջի տնօրինության կողմից տրված թույլտվությամբ՝ ծնողի իմացությամբ, կուրսղեկի, փոխտնօրենի միջնորդությամբ՝ բացակայությունները, հետևյալ դեպքերում.
        ա) դասապրոցեսի ընթացքում ինքնազգացողության վատացում (ուս.աշխ.գծով փոխտնօրենի թույլտվությամբ՝ տվյալ օրվա դասաժամից/դասաժամերից),
        բ) մասնագիտական գործունեությանը առնչվող հասարակական միջոցառումների մասնակցություն, համապատասխան գրության դեպքում (տնօրենի թույլտվությամբ),
        գ) այլ (տնօրենի թույլտվությամբ):
12. Բացակա դասաժամերը թույլատրվում է լրացնել՝
    ա) հիվանդության պատճառով (համապատասխան փաստաթղթի առկայության դեպքում)՝ մինչև 90 ակադեմիական ժամ բացակայությունները,

բ) քոլեջի տնօրինության կողմից տրված թույլտվության (հաշմանդամ կամ հիվանդ ծնողին խնամելու(համապատասխան մարմնի կողմից տրված տեղեկանքի առկայության դեպքում), նրա ընտանիքի անդամի կամ մերձավորի մահվան և այլ պատճառներով՝ մինչև 24 ակադեմիական ժամ բացակայությունները,

գ) անհարգելի մինչև 50 ժամ անընդմեջ բացակայությունները,

դ) կիսամյակի ընթացքում ոչ անընդմեջ 90 ժամը չգերազանցող բացակայությունները:

13. Կիսամյակի ընթացքում անընդմեջ 50 ակադեմիական ժամը գերազանցող անհարգելի բացակայություններ ունեցող ուսանողների հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդի նիստում՝ ըստ քոլեջի կանոնադրությամբ սահմանված կարգի, որի արդյունքում որոշվում է նրանց քոլեջում սովորելու նպատակահարմարության կամ բացակա դասաժամերի լրացման թույլտվություն տալու հարցը:
14. Կիսամյակի ընթացքում ոչ անընդմեջ 90 ժամը գերազանցող բացակայություններ ունեցող ուսանողների բացակայությունների լրացման թույլտվության հարցը քննարկվում է մանկավարժական խորհրդի նիստում՝ ըստ քոլեջի կանոնադրությամբ սահմանված կարգի, որի արդյունքում որոշվում է ուսանողի քոլեջում սովորելու նպատակահարմարության կամ բացակա դասաժամերի լրացման թույլտվություն տալու հարցը:
15. Կիսամյակի ընթացքում հիվանդության պատճառով անընդմեջ 90 ժամը գերազանցող հարգելի բացակայություն ունեցող ուսանողին, սահմանված կարգով, համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու դեպքում տրվում է ակադեմիական արձակուրդ:
16. Պրակտիկաների ծրագրով նախատեսված ժամերի 25 %-ը չգերազանցող բացակայությունները, լրացվում են պրակտիկայի անցկացման վայրում, արտաժամյա հերթապահությունների ձևով՝ նաև շաբաթ և կիրակի օրերին, ժամը՝ $10^{00}$-ից $16^{00}$ ընկած ժամանակահատվածում:
17. Պրակտիկաների ժամերի 25%-ը գերազանցող բացակայություն ունեցող ուսանողների հետագա ուսուցման հարցը քննարկվում է տնօրինության կողմից, որի արդյունքում որոշվում է ուսանողի քոլեջում սովորելու նպատակահարմարության կամ բացակայությունները լրացնելու թույլտվություն տալու և լրացման կարգի հարցը:

## 3. ԲԱՑԱԿԱ ԴԱՍԱԺԱՄԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

18. Բացակայությունները լրացվում են բացակա օրերից հետո 2 շաբաթվա ընթացքում, կիսամյակի վերջին շաբաթը՝ նույն շաբաթվա ընթացքում:
19. Ուսանողները բաց թողած դասաժամերը կարող են լրացնել տվյալ առարկան, մոդուլը պարապող դասախոսի մոտ.
    19.1. Նույն առարկայի, մոդուլի դասաժամին:
    19.2. Լրացուցիչ պարապմունքներին՝ դասախոսի հայեցողությամբ, մասնակցելու և սահմանված կարգով բաց թողած թեմաները հանձնելու միջոցով:
    19.3. Տեսական ժամերից բացակայությունը համարվում է լրացված, եթե տվյալ թեմայից ուսանողը ներկայացնում է ռեֆերատ:
20. Ուսումնական և արտադրական պրակտիկաների վերջին մեկ շաբաթվա բացակայությունների, կիսամյակների վերջին մեկ շաբաթվա բացակայությունների լրացման հարցը դրվում է տնօրինության քննարկմանը:
21. Հարգելի բացակայություններ ունեցող այն ուսանողները, որոնք խախտել են 18-րդ կետով սահմանված ժամանակացույցը, հավասարեցվում են անհարգելի պատճառով բացակայած ուսանողներին:
22. Ուսանողը 50 ակադեմիական ժամերը գերազանցող բացակա դասաժամերը լրացնում է ուսումնական մասի կողմից տրված ուղեգրի հիման վրա: Ուղեգրում նշվում է ուսանողի անուն ազգանունը, մասնագիտությունը, կուրսը, խումբը, առարկայի անվանումը, բացակա դասաժամերի օրը, քանակը, լրացման օրը, լրացուցիչ պարապմունքի թեմայի անվանումը և գնահատականը՝ վերջինը գրանցում է բացակայությունը լրացնող դասախոսը:
23. Կուրսղեկը (չլինելու դեպքում՝ պարապող դասախոսը, ուս.մասի վարիչը) յուրաքանչյուր ամսվա կեսին և վերջին, գրավոր ձևով, ուս.գծով փոխտնօրենին է ներկայացնում նախկին 15-օրվա ընթացքում 50 ակադեմիական ժամը գերազանցող բացակայած ուսանողների մասին համապատասխան տեղեկատվություն:
24. 22-րդ կետում նշված ուսանողների բացակայությունների լրացումը կատարվում է դասախոսների համար հաստատված բացակայությունների լրացման լրացուցիչ պարապմունքների անցկացման ժամանակացույցին համապատասխան օրերին,

դասերից հետո՝ սովորողի ազատ դասաժամերի հաշվին ըստ ուղեգրում նշված ժամկետի:

25. Կիսամյակում ամփոփիչ ակադեմիական պարտքեր ունենալու դեպքում՝ տեսական և գործնական ժամերի համար ուս. աշխ. գծով փոխտնօրենը, պրակտիկայի մասով՝ պրակտիկայի ղեկավարը կազմում են դասախոսների աշխատանքային ժամանակացույց՝ չառաջադիմող և երկարատև բացակայություն ունեցող ուսանողների հետ աշխատելու համար: Ժամանակացույցով նախատեսվում են աշխատանքներ արձակուրդների ընթացքում կամ արձակուրդներից հետո՝ ուսանողների պարտքերի մարման շրջանում: Ժամանակացույցը հաստատվում է տնօրենի կողմից:

## 4. ԲԱՑԱԿԱ ԴԱՍԱԺԱՄԵՐԸ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

26. Լրացուցիչ պարապմունքները կարող են իրականացվել խմբակային կամ անհատական կարգով:

26.1. Ուսանողը՝ բացակայությունների լրացման ուղեգիրը կամ ակադեմիական տարբերությունների հանձնման ժամանակացույցը ներկայացնում է դասախոսին, որը հաստատված ժամանակացույցին համապատասխան անցկացնում է լրացուցիչ պարապմունքները:

26.2. Լրացուցիչ պարապմունքի ընթացքում դասախոսը մատուցում է բաց թողած, չուսումնասիրած թեման, ստուգում ուսանողի կողմից նյութի յուրացման մակարդակը, ձեռք բերած գիտելիքները և գնահատում այն:

26.3. Բացակայությունների լրացման արդյունքում ստացած գնահատականը դասախոսը փոխանցում է դասամատյան, էլ. մատյան և ուղեգիր, որն ուսանողն անձամբ վերադարձնում է կուրսղեկին, ուս. գծով փոխտնօրենին: Դասամատյանի համապատասխան վանդակում նշված «բ» տառի մոտ դրվում է գծիկ և նշվում գնահատականը (բ/գնահատական):

26.4. Ակադեմիական տարբերությունների հանձնման արդյունքում ստացած գնահատականը դասախոսը փոխանցում է դրանց գրանցման և հաշվառման համար մատյան և տարբերությունների հանձնման ժամանակացույց, որը ուսանողը անձամբ վերադարձնում է ուս.գծով փոխտնօրենին:

## 5. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

27. Ուսումնական գծով փոխտնօրենը, ուսումնական մասի վարիչը, ամբիոնի վարիչը, կուրսղեկները և դասավանդող դասախոսները պարտավոր են հսկողություն սահմանել, որպեսզի ուսանողները սույն կարգի 3-րդ և 4-րդ գլուխներում նշված կարգով և ժամկետներում լրացնեն բացակա դասաժամերը:

Ուսանողների հաճախումների և բացակա դասաժամերի լրացման ընթացքի վրա վերահսկողություն են իրականացնում կուրսղեկը, մեթոդիստը, պրակտիկայի ղեկավարը և ուս.գծով փոխտնօրենը:

Ակադեմիական տարբերությունների լրացման ընթացքի վերահսկողությունն իրականացնում է քոլեջի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենը:

## 6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

28. Սույն կարգը ուժի մեջ է մտնում սահմանված կարգով հաստատվելուց և վավերացվելուց հետո:

29. Այս կարգը կարող է ենթարկվել փոփոխությունների՝ քոլեջի կառավարման, տնօրինական խորհրդում սահմանված կարգերով քննարկվելուց և հաստատվելուց հետո:

30. Այս կարգի պահանջների կատարումը ամրագրվում է ուսանողների հետ կնքվող պայմանագրում: